ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ, 2020 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՆԱԽԱԲԱՆ

2020 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել իրական սեփականատերերի ենթաօրենսդրական ակտերի մշակմանը, իրական սեփականատերերի բացահայտման ռեգիստրի ստեղծման համար ծառայությունների գնման գործընթացի ապահովմանը, «Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության», Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի և Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագրի նախագծերի կազմմանը:

2020թ. փետրվարի 11-ին հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի փետրվարի 5-ի «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» N 36 հրամանը[1], որով հաստատվել են իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը[2]: Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի՝ մինչև փետրվարի 20-ը իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձինք՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման և մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող կազմակերպությունները Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր են ներկայացրել իրենց կազմակերպության իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր: Մարտի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Իրական

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138750

[2] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/02/11/BO-register/81/

սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը[3]:

Հաշվետու ժամանակահատվածում «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերության կողմից տրամադրվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի մեկնարկային հաշվետվությունը և պետական պետական մարմիններից հավելյալ հարցման հարցաշարերը, որոնք շրջանառվել են ԲՇԽ-ի անդամների միջև՝ նկատառումների ներկայացման նպատակով: Տեղի է ունեցել «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերության և ԲՇԽ-ի անդամների միջև հանդիպում-քննարկում՝ մեկնարկային հաշվետվության նախագծի վերաբերյալ ԲՇԽ-ի կողմից ներկայացված նկատառումների շուրջ, որից հետո տրամադրվել է ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի մեկնարկային հաշվետվության վերջնական լրամշակված տարբերակը: «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերությունը տրամադրել է նաև ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի կազմման երկրորդ փուլով նախատեսված Զեկույցի՝ ոչ ֆինանսական (կոնտեքստային) տեղեկությունների մասի նախագիծը:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի շրջանակում, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը Հայաստանին և Անկախ վավերացնողին է տրամադրել իր նախնական գնահատման զեկույցը:

Փետրվարի 10-12-ը Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում տեղի է ունեցել ԱՃԹՆ-ի խորհրդի հերթական նիստը, որի Հայաստանի ԱՃԹՆ-ից մասնակցել է ԱՃԹՆ ԲՇԽ կառավարության խմբակցության անդամ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը[4]: Խորհրդի նիստի օրակարգային հարցերից են եղել ԱՃԹՆ-ի վավերացման ընթացակարգի հնարավոր փոփոխությունները, հանքարդյունաբերության ոլորտում էներգետիկ փոխակերպման և կոռուպցիայի կանխարգելման թեմաները:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում»

---

[3] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/26/beneficial-owners-data-subject-to-publication/83/

[4] http://mtad.am/hy/news/item/2020/02/14/mtad14.02/

ծրագրի շրջանակում մարտի 6-8-ը Դիլիջանում անցկացվել է «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և ֆինանսական հոսքերի թափանցիկության ԱՃԹՆ-ի պահանջները» խորագրով դասընթաց, որին մասնակցել են ներկայացուցիչներ ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարությունից, ԲՇԽ-ից, պետական մարմիններից և Համաշխարհային բանկից:

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման քննարկման շուրջ: Մարտի 31-ին ավարտվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագիրը, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Հանրային վարչարարության բարեփոխումներ Արևելյան գործընկերության երկրներում» նախաձեռնությամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2019-2020թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-ի 2020Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	**Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 1. **ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. **Կայքի ընթացիկ սպասարկում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ Ընթացիկ	Ընթացիկ	ընտրված կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. **ԱՃԹՆ կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրությունների, իրավական ակտեր, նորություններ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. **Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. **Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով** (YouTube, Twitter, facebook **և այլ ցանցեր**)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. **Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հանդիպումներ (այդ թվում՝ մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

	խմբակցությունների հետ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ վերաբերյալ տեղեկատվական/ ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության վերաբերյալ կրթական տեսանյութեր *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ապերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի առցանց հաշվետվության համակարգում ստեղծված «Գծապատկերներ» էջում ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից ստեղծվել են 2016-2017թթ. դրությամբ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրության, արտահանման, զբաղվածության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ վճարված հարկերի և վճարների վերաբերյալ և այլ գծապատկերներ:[5]

Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում

Հաշվետու ժամանակահատվածում «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն, խորհրդատվություն է տրամադրել քարտուղարությանը, անկախ ադմինիստրատորին, պետական մարմիններին և հանքարդյունահանող ընկերություններին առցանց հաշվետվության համակարգում հրապարակային հաշվետվությունների

[5] https://reports.eiti.am/hy/graphics/

մուտքագրման, էլեկտրոնային ստորագրման և ներկայացման ժամանակ խնդիրների առաջացման ժամանակ, ինչպես նաև վերացրել մուտքագրման ժամանակ բացահայտված ծրագրային խնդիրները:

Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի կայքի բովանդակության զարգացման աշխատանքները: Կայքում լրացվել է բոլոր բաժինների բովանդակությունը, տեղադրվել են ԱՃԹՆ-ի բաց գործելաոճի կանոններով հանրության համար հասանելի իրավական ակտերը, փաստաթղթերը, և համաատասխան տեղեկություններն ու նորությունները, ինչպես նաև կայքի տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Կայքում հրապարակվել են հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումների վերաբերյալ 4 նորություն[6]՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)

Շարունակաբար թարմացվել են Facebook[7] YouTube[8] և Twitter[9] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում մարտի 6-8-ը Դիլիջանում անցկացվել է «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և ֆինանսական հոսքերի թափանցիկության ԱՃԹՆ-ի

[6] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

[7] https://www.facebook.com/EITIArmenia/

[8] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

[9] https://twitter.com/EITI_Armenia

պահանջները» խորագրով դասընթաց:[10] Դասընթացը վարել են «Զեթ Քոնսալթինգ» ՓԲԸ և «Ավենյու Քոնսալթինգ Գրուպ» ՍՊԸ խորհրդատվական ընկերությունների խորհրդատուները: Դասընթացին մասնակցել են ներկայացուցիչներ ՀՀ հաշվեքննիչ պալատից, Պետական եկամուտների կոմիտեից, Շրջակա միջավայրի նախարարությունից, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, Ֆինանսների նախարարությունից, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից, Համաշխարհային բանկից, Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունից: ԲՇԽ-ի անդամներ՝ հանքարդյունահանող ընկերությունների խմբակցությունից՝ Արմեն Ստեփանյանը և Վահե Վարդանյանը, ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունից՝ Հարություն Մովսիսյանը նույնպես մասնակցել են դասընթացին:
Եռօրյա դասընթացի օրակարգը ընդգրկում էր հետևյալ թեմաները՝

- ԱՃԹՆ-ի համաշխարհային ստանդարտի իրականացումը Հայաստանում,
- ԱՃԹՆ-ի միջոցով մետաղական հանքարդյունաբերության ոլորտից հրապարակվող ֆինանսական հոսքերը,
- Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի հիմնական հարկատեսակները և վճարները, ֆինանսական հոսքերի ձևավորման մեխանիզմները,
- Ոլորտի շահութաբերության վրա ազդող գործոնները,
- Մետաղների գների կանխատեսումը և դրա միջոցով առաջիկա տարիներին ոլորտից պետության եկամուտները գնահատելու հնարավորությունը,
- Հանքարդյունահանող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի վճարման նպատակները և հաշվարկման ու վճարման ռեժիմը,
- Մասհանումների կատարման, համայնքների ու իրականացվելիք բնապահպանական ու առողջապահական ծրագրերի ընտրության մեթոդաբանությունը,
- Շրջական միջավայրի պահպանության դրամագլխի և ֆինանսական երաշխիքների մեխանիզմների վերանայման հնարավորությունները,
- Ոլորտից պետական եկամուտների աճը, դրա վրա ազդող գործոնները,
- Տրանսֆերային գնագոյացման մեխանիզմի ներդրումը:

Միջոցառում 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում

Տե՛ս հավելված 1

ՆՊԱՏԱԿԸ	Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում

[10] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/09/eiti-fiscal-regime-training-6-8-march-2020/82/

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 15. **Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը*՝ Առաջին եռամսյակ	Իրականացվել է	Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական ախատանքային խումբ, Արդարադատության նախարարություն, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16. **Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը*՝ Առաջին եռամսյակ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, Արդարադատության նախարարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հանրային ռեգիստր *Վերջնաժամկետը*՝ Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 19. **Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Ուսուցում *Վերջնաժամկետը*՝ Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. **Իրական**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից	*Արդյունքը՝* Հայտարարագրեր *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	Ընկերություններ, իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 21. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, Իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խումբ	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում
Միջոցառում 16. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն

2020թ. փետրվարի 11-ին հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի փետրվարի 5-ի «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» N 36 հրամանը[11], որով հաստատվել են իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը:[12] Հրամանն ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Մշակվել է «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը փետրվարի 28-ին տրամադրվել է ԱՃԹՆ-ի ԲՇԽ անդամներին և ՀՀ վարչապետի հանձնարարականով՝ պետական մարմիններին՝ դրա վերաբերյալ եռօրյա ժամկետում կարծիքներ ներկայացնելու նպատակով: Մարտի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի

[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138750

[12] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/02/11/BO-register/81/

Հանրապետության կառավարության որոշումը:[13] Որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից իրական սեփականատերերի բացահայտման պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց կողմից Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրով ներկայացված իրական սեփականատերերի մասին տեղեկատվությունը հրապարակվելու է պետական ռեգիստրի www.e-register.am կայքում՝ բացառությամբ ֆիզիկական անձանց անձը հաստատող փաստաթղթի տվյալների, այդ թվում՝ հանրային ծառայության համարանիշի, ինչպես նաև նրանց հաշվառման և բնակության հասցեների մասին տեղեկատվության:

Միջոցառում 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման համար ծառայությունների գնման գործընթացը: Գնման մրցույթի հաշվետվությունը և գնահատող հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկները հաստատվել են Համաշխարհային բանկի ծրագրերի Խորհրդի կողմից: Մարտի 18-ին անցկացվել են բանակցություններ մրցույթում ընտրված կազմակերպության հետ ներկայացված ֆինանսական և տեխնիկական առաջարկների շուրջ:

Միջոցառում 19. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում

2020 թվականի հունվարի 29-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում կայացել է հանդիպում հայտարարագիր ներկայացնելու պատրավորություն ունեցող մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը լրացնելու շուրջ: Հանդիպման ընթացքում ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ անդամներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը և Արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը և ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրել են իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ներկայացման կարգը և ժամանակացույցը, պահանջվող տեղեկությունների շրջանակը, հայտարարագրի լրացման տարբերակները՝ գծապատկերներով վիզուալիզացված օրինակներ, ինչպես նաև պարզաբանումներն են տրվել ներկաների կողմից բարձրացված հարցերին:[14]

Հունվար-փետրվար ամիսներին Արդարատության նախարարությունը և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը տրամադրել է խորհրդատվություն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող ընկերություններին: Միաժամանակ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և ռեգիստրը սպասարկող ընկերության

[13] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/26/beneficial-owners-data-subject-to-publication/83/

[14] http://mtad.am/hy/news/item/2020/01/29/mtad29.01/

ներկայացուցիչների հետ քննարկվել է մինչև իրական սեփականատերերի ծրագրային ապահովման պատրաստ լինելը հայտարարագրերի հրապարակման հնարավոր լուծումները և որոշում է կայացվել ռեգիստրում ընկերությունների հանրային ազատ հասանելիություն ունեցող մասում հրապարակել ներկայացված հայտարարագրի լուսածրված PDF ձևաչափով տարբերակը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված չհրապարակվող տվյալների:

Միջոցառում 20. Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի՝ մինչև փետրվարի 20-ը իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձինք՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման և մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող կազմակերպությունները Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր են ներկայացրել իրենց կազմակերպության իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր: Հայտարարագրերը ներկայացվել են թղթային տարբերակով, քանի որ տվյալ ժամանակահատվածում էլեկտրոնային համակարգը դեռևս պատրաստ չէր՝ պայմանավորված համակարգի մշակման համար ծառայությունների գնումների գործընթացի երկարաձգմամբ:

Միջոցառում 21. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում

2020 թվականի մարտի 2-4-ը աշխատանքային այցով Հայաստան է ժամանել OpenOwnership կազմակերպության Հայաստանի ծրագրի կառավարիչ Փիթեր Լոուն, որը հանդիպումներ է ունեցել ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարություն, Արդարադատության նախարարության, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ներկայացուցիչների հետ, քննարկվել են իրական սեփականատերի մասին տվյալների համապատասխանության, հայտարարագրի բովանդակության, կառուցվածքայնության, ծրագրային լուծումների, միջազգային ռեգիտրերի հետ փոխգործելության հետ կապված հարցեր: Հաշվետու ժամանակահատվածում, մասնավորապես ՀՀ արդարադատության նախարարի «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» հրամանի մշակման ընթացքում աշխատանքներում ներգրավված մասնագետները վեր են հանել մի շարք օրենսդրական բացեր: Սույն բացերը, ինչպես նաև ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած խնդիրները և միջազգային գործընկերների առաջարկությունները կքննարկվեն 2020 թվականի 2-րդ եռամսյակում, որի արդյունքում կմշակվեն օրենսդրական առաջարկություններ, որոնք կներկայացվեն ՀՀ կառավարությանը:

Մարտի 4-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Բրիտանական դեսպանատան աջակցությամբ կազմակերպել է քննարկում զանգվածային լրատվության ընկերությունների ներկայացուցիչների հետ, որի

նպատակն էր քննարկել լրատվամիջոցների իրական սեփականատերերի բացահայտման անհրաժեշտությունը և խնդիրները: ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը քննարկմանը ներկայացրել է իրական սեփականատերերի բացահայտման փորձը հանքարդյունաբերության ոլորտում, գործող իրավական պահանջները և կարգավորումները:

ՆՊԱՏԱԿԸ	**Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 24 **Վավերացման գործընթաց**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Վավերացում *Վերջնաժամկետը՝* Երրորդ եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, միջազգային վավերացնողներ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 25. **ԲՇԽ-ի նիստերի անցկացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ չի անցկացվել՝ պայմանավորված նաև կորոնավիրուս (COVID-19) հիվանդության կապակցությամբ Հայաստանում արտակարգ դրության ռեժիմի սահմանմամբ, որի պարետ է նշանակվել ԲՇԽ-ի նախագահ

				Տիգրան Ավինյանը:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 26. **ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 29. **ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 31. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2019**թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողական Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 32. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2020**թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագիր *Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 34.	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	*Արդյունքները՝* Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 35. **Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման համակարգում գնումների գործընթացի ապահովում *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. **ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Եռամսյակային հաշվետվություններ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 39. **Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր, միջազգային աշխատանքային խմբերի առցանց հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41.	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

Թարգմանչական աշխատանքներ	*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ		

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 24. Վավերվացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը Հայաստանին և անկախ վավերացնողին է տրամադրել վավերացման շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի նախնական գնահատումը: Համաձայն միջազգային քարտուղարության գնահատման՝ Հայաստանը ԱՃԹՆ-ի ստանդարտի 18 պահանջներով ունի բավարարող՝ (satisfactory) գնահատական, 4 պահանջներով ավելի քան գերազանց գնահատական (beyond): Միայն երկու պահանջների կատարումն է ցածր գնահատվել՝ 5. 2. Տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող փոխանցումները (Subnational transfers) պահանջի մասով գնահատվել է ոչ համարժեք առաջընթաց (inadequate), և 6. 1. Ընկերությունների կողմից կատարվող պարտադիր սոցիալական ծախսումներ (Mandatory social expenditures) պահանջի մասով՝ նշանակալի առաջընթաց (meaningful): Միջազգային քարտուղարությունը տեղեկացրել է նաև, որ իրենց տրամադրած նախնական գնահատումը կարող է տարբերվել Անկախ վավերացնողի գնահատումից, ինչպես նաև նախնական գնահատման հետ կապված նկատառումները պետք է տրամադրել Անկախ վավերացնողի կողմից նախնական գնահատումը տրամադրելուց հետո: Այնուամենայնիվ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության նախնական գնահատման հաշվետվությունը տրամադրվել է նաև ԲՇԽ-ի անդամներին՝ նախապատրաստվելու ցածր գնահատված պահանջների մասով ուղղիչ գործողությունների կատարմանը: Անկախ վավերացնողի կողմից նախնական գնահատման հաշվետվությունը կտրամադրվի երկրորդ եռամսյակում:

Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ տեղի չի ունեցել:

Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խմբի մի շարք հանդիպումներ իրական սեփականատերերի ենթաօրենսդրական ակտերի նախագծերի շուրջ:

Միջոցառում 29. ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն

Փետրվարի 10-12-ը Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում տեղի է ունեցել ԱՃԹՆ-ի խորհրդի հերթական նիստը, որի Հայաստանի ԱՃԹՆ-ից մասնակցել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը[15]: Խորհրդի նիստի օրակարգային հարցերից են եղել ԱՃԹՆ-ի վավերացման ընթացակարգի հնարավոր փոփոխությունները, հանքարդյունաբերության ոլորտում էներգետիկ փոխակերպման և կոռուպցիայի կանխարգելման թեմաները:

Միջոցառում 31. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը մշակել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի նախագիծը, որի հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է երկրորդ եռամսյակի ընթացքում:

Միջոցառում 32. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը լրամշակել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի նախագիծը, որի հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է երկրորդ եռամսյակի ընթացքում:

Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման քննարկման շուրջ:
Մարտի 31-ին ավարտվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագիրը, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Հանրային վարչարարության բարեփոխումներ Արևելյան գործընկերության երկրներում» նախաձեռնությամբ:

Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք

[15] http://mtad.am/hy/news/item/2020/02/14/mtad14.02/

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ՀՀ ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով տվյալ ժամանակահատվածի համար սահմանված միջոցառումների պլանավորման և իրականացման աշխատանքները՝ համաձայնեցնելով դոնոր կազմակերպությունների հետ: Կազմակերպվել են հանդիպումներ շահագրգիռ կողմերի, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խմբերի անդամների հետ, իսկ կորոնավիրուս (COVID-19) հիվանդության հետ կապված Հայաստանում արտակարգ դրության ռեժիմի սահմանումից հետո առցանց՝ ապահովելով ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներն ու համագործակցությունը: Համաձայն Համաշխարհային բանկի դրամաշնորհի երկարաձգման՝ լրամշակվել և Համաշխարհային բանկի հաստատմանն է ուղարկվել դրամաշնորհային ծրագրի գնումների զարգացման ռազմավարությունը և 2020թ. բյուջեն, ինչպես նաև ներկայացվել է 2021 թ. պետական բյուջեի բյուջետային հայտը: Փետրվարին համալրվել է ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության փորձագետի թափուր հաստիքը:

Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հասրատում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019 թվականի չորրորդ եռամսյակի հաշվետվությունը, որն երկրորդ եռամսյակում ԲՇԽ-ի կողմից հաստատվելուց հետո կհրապարակվի ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում[16]:

Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱՃԹՆ-ի քարտուղարության պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի շրջանակում, տեղի է ունեցել տեսազանգ տվյալների համակարգված բացահայտման շուրջ, ինչպես նաև առցանց՝ տեսազանգի միջոցով և էլեկտրոնային հաղորդակցությամբ քննարկվել են 2020թ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների կատարման հետ կապված հարցեր: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության Խորհրդի նիստից առաջ անդամ երկրների միջև տեսազանգի միջոցով խորհրդակցություն է անցկացվել կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից ԱՃԹՆ-ի դերի և հետագայում վավերացման աշխատանքների կազմակերպման առաջարկների շուրջ, որոնց վերաբերյալ նաև հարցաշարեր են լրացրել ԱՃԹՆ-ի անդամ երկրների ԲՇԽ-ները, այդ թվում՝ Հայաստանի: Միջազգային քարտուղարության կարծիքին են տրամադրվել «Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության»

[16] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

նախագիծը, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի մեկնարկային հաշվետվությունը և Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը:

Միջոցառում 41. Թարգմանչական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում անգլերեն են թարգմանվել ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի նախագիծը և Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի նախագծով կատարված լրամշակումները:

ՆՊԱՏԱԿԸ	**ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ զեկույցի կազմում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. **ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հանդիպում, առաջարկություններ, ԲՇԽ-ի նիստ *Վերջնաժամկետը*՝ Առաջին եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, այլ շահագրգիռ մարմիններ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 46. **Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Տեխնիկական առաջադրանք	Ընթացիկ	Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	

	Վերջնաժամկետը՝ Չորրորդ եռամսյակ, 2019թ. - երրորդ եռամսյակ, 2020թ.			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 47. **ԱՃԹՆ-ի** 2019**թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 43. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով

Կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի N212-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, համաձայն որի օրենքի ընդունումից հետո.

- մասնահանումներ կատարվելու են մետաղական օգտակար հանածոներ արդյունահանման իրավունք ունեցող բոլոր կազմակարեպությունների, ինչպես նաև Շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնի կողմից սահմանվող այլ ընկերությունների վճարված բնապահպանական հարկերից: Ընկերությունների ցանկը կազմվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա,
- համայնքների տարածքում իրականացվող բնապահպանական ծրագրերը յուրաքանչյուր տարի հրապարակվելու են համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
- ընթացիկ տարվա բնապահպանական ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարը կազմելու է հաշվետվություն և ներկայացնելու է համայնքի ավագանու հաստատմանը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: Համայնքի ավագանու կողմից հաստատված հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը հրապարակվելու է համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Միջոցառում 46. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում

Հաշվետու ժամանակահատվածում «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերության կողմից տրամադրվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի մեկնարկային հաշվետվությունը և պետական պետական մարմիններից հավելյալ հարցման հարցաշարերը, որոնք շրջանառվել են ԲՇԽ-ի անդամների միջև՝ նկատառումների ներկայացման նպատակով: Տեղի է ունեցել «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերության և ԲՇԽ-ի անդամների միջև հանդիպում-քննարկում՝ մենկարկային հաշվետվության նախագծի վերաբերյալ ԲՇԽ-ի կողմից ներկայացված նկատառումների շուրջ, որից հետո տրամադրվել է ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի մեկնարկային հաշվետվության վերջնական լրամշակված տարբերակը: «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերությունը տրամադրել է նաև ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի կազմման երկրորդ փուլով նախատեսված Զեկույցի՝ ոչ ֆինանսական (կոնտեքստային) տեղեկությունների մասի նախագիծը:

Միջոցառում 47. ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որի շրջանառումը ԲՇԽ-ի անդամների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության միջև՝ նախագծի վերաբերյալ կարծիքների և առաջարկությունների ներկայացման նպատակով, և հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է երկրորդ եռամսյակի ընթացքում:

ՆՊԱՏԱԿԸ	**Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդնում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 54. **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության Ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Ճանապարհային քարտեզի միջոցառումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան նախարարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55.	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ	*Արդյունքները՝* հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 54. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության Ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում ՊՀ աշխատանքային խմբին առաջարկների և դիտողությունների ներկայացման նպատակով տրամադրվել են «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի և Saint Barbara ընկերության կողմից կազմված «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության լրամշակված նախագիծը (տրամադրվել է փետրվարի 18-ին), DMT GmbH &Co.KG-ի և Ֆինլանդիայի երկրաբանական հետազոտական կենտրոնի (GTK) համատեղ ձեռնարկության (JVDGA) կողմից կազմված «Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման» վերջնական զեկույցի նախագիծը (անգլերեն տարերակը՝ մարտի 2-ին, հայերեն տարբերակը՝ մարտի 8-ին), այնուհետև՝ մարտի 31-ին, վերջնական զեկույցի հայերեն և անգլերեն տարբերակները, ինչպես նաև տեղեկատվություն նախագծի շուրջ ներկայացված նկատառումները զեկույցում հաշվի առնելու վերաբերյալ:

Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ

Միջոցառումը չի իրականացվել հաշվետու ժամանակահատվածում:

ՆՊԱՏԱԿԸ	**ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգված բացահայտման խրախուսում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 60. **Բաց տվյալների**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, **տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով** (toolkit), **տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում**	*Արդյունքները՝* ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ի գործիքակազմով քարտեզագրում, ճանապարհային քարտեզ/գործողությունների ծրագիր *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ընտրված կազմակերպություն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 60. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում

Հունվարի 14-ին կարծիքների և առաջարկությունների ներկայացման նպատակով ԲՇԽ-ի անդամներին, պետական մարմիններին նաև Վարչապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնական գրությամբ, տրամադրվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ ԱՃԹՆ-ի իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում կազմված «Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության» նախագիծը, ինչպես նաև անկախ փորձագետի ԲՇԽ-ի անդամների և պետական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների արձանագրությունները: Հաշվի առնելով, որ ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները առաջիկա 3 տարիների ընթացքում ԱՃԹՆ-ն իրականացնելիս պետք է ԱՃԹՆ-ի ազգային զեկույցներ հրապարակելուց անցում կատարեն տվյալների համակարգային բացահայտումների՝ ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման աշխատանքային խումբ ստեղծելու նպատակով ներկայացվել են նաև ԲՇԽ-ի անդամների և ԱՃԹՆ-ի տվյալներին տիրապետող պետական մարմինների աշխատակիցների

թեկնածություններ, որոնք ունեն համապատասխան կարողություններ աջակցելու բազմաշահառու խմբին առաջիկա տարիների ընթացքում իրականացնել գործողությունների պլանով սահմանված միջոցառումները: ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման աշխատանքային խմբում ընդգրկելու համար ներկայացվել են հետևյալ թեկնածությունները՝

1.	Սրբուհի Գալյան	ԱՃԹՆ ԲՇԽ կառավարության խմբակցության անդամ, Արդարադատության նախարարի տեղակալ
2.	Հարություն Մովսիսյան	ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ
3.	Օլեգ Դուլգարյան	ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ
4.	Գոհար Ղազինյան	ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ
5.	Վիկտորյա Բուռնազյան	ԱՃԹՆ ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության անդամ
6.	Լուսինե Մկրտչյան	ՊԵԿ հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության պետի տեղակալ
7.	Անդրանիկ Մուրադյան	ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության ընթացակարգերի բաժնի պետ
8.	Աշխեն Պապոյան	ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվության փոխանակման և կառավարման բաժնի պետի տեղակալ
9.	Սերգեյ Աբրահամյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետ
10.	Վաչագան Հարությունյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի գլխավոր մասնագետ
11.	Փառանձեմ Դարբինյան	Տարածքային կառավարման վարչության տարածքային ծրագրերի և մշտադիտարկման բաժնի պետ
12.	Քրիստինե Բաղդասարյան	Շրջակա միջավայրի նախարարության ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
13.	Արթուր Ղավալյան	Շրջակա միջավայրի նախարարության բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչության շրջակա

		միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմների, ստանդարտների ու տեխնիկական կանոնակարգերի բաժնի պետ
14.	Անի Վարդերեսյան	«Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի փորձագետ
15.	Արաքս Ավետյան	«ԷԿԵՆԳ» ՓԲԸ ծրագրերի կառավարման գլխավոր փորձագետ

ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման աշխատանքային խմբում ընդգրկելու նպատակով թեկնածու ներկայացնելու վերաբերյալ Ֆինանսների նախարարության կողմից առաջարկություններ չեն ներկայացվել, սակայն նախարարությունը հայտնել է, որ Ֆինանսների նախարարության իրավասությանն առնչվող հարցերի քննարկման անհրաժեշտության դեպքում նախարարության համապատասխան ներկայացուցիչը կմասնակցի և դրանց վերաբերյալ դիրքորոշում կներկայացնի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր աշխատակարգի շրջանակներում:
Աշխատաքային խմբում կընդգրկվեն նաև առնվազն 2 անդամներ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցությունից:

Հավելված 1

2020 **թվականի առաջին եռամսյակում «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները**[17]

1. *«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում*

1. 1 Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային ծրագրի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում ամփոփել է թվով ինը ուսուցողական տեսանյութ՝ պատասխանատու հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի Ստանդարտի և գործընթացների վերաբերյալ՝ ԱՃԹՆ ԲՇԽ անդամների, ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերի և հանրության իրազեկման նպատակով: Նշված ուսուցողական տեսանյութերը[18] տեղադրվել են YouTube-ի հարթակում՝ անդրադառնալով հետևյալ թեմաներին.

2. ԱՃԹՆ ստանդարտ
3. Բազմաշահառու խումբ
4. Իրական սեփականատերերի բացահայտում
5. Պայմանագրերը և ընդերքօգտագործման թույլտվությունները Հայաստանում
6. Արդյունահանող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները և վճարումները
7. Սոցիալական ծրագրերը հանքարդյունաբերության ոլորտում
8. Արտադրության և երկրաբանական ուսումնասիրությունների տվյալները
9. Պատասխանատու հանքարդյունաբերություն՝ բնապահպանական և առողջապահական պատասխանատվություն տնտեսական և կայուն զարգացման ապահովում

[17] Տեղեկատվությունը տրամադրվել է Թրանսփարենսի ինտերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից

[18] https://www.youtube.com/playlist?list=PLcNfo5oEeefkG2hh3HFc9iV9KDnyLka35